ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար <<Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց>> և ՀՀ Արարատի մարզի <<Վեդիի ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ների շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի հուլիսի 22-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/17 պայմանագրում 2020 թվականի դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1) Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 08.12.2020թ. N 1988-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/17 պայմանագրում և վճարման ժամանակացույցում կատարվել է 2020թ. համար հատկացված ֆինանսական միջոցների նվազեցում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:
2) Փոփոխության առաջացման պատճառ	Պայմանագրի հետագա կատարումն ապահովելու համար համապատասխան պայմանագրային դրույթի սահմանում:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 7.12 կետից հետո լրացվել նոր 7.13 կետ:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

22.07.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/17 գնման պայմանագրի

ք. Երևան «18» դեկտեմբերի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան>> հիմնադրամն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս հիմնադրամի ռեկտոր Ե. Վարդանյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 08.12.2020թ. N 1988-Ն որոշումը, ինչպես նաև <<Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց>> և ՀՀ Արարատի մարզի <<Վեդիի ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ների շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 22.07.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/17 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետը լրացնել նոր 4.1.2 ենթակետով՝ հետևյալ խմբագրությամբ.

<<4.1.2 2020 թվականի համար վճարման ենթակա գումարը կազմում է 9 855 000 (ինը միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ:>>:

1.1.2 Պայմանագրի 7.12 կետից հետո լրացնել նոր 7.13 կետ՝ հետևյալ խմբագրությամբ.

<<7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:>>:

1.1.3 Պայմանագրի հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034387, 900011034403
ՀԿՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

L.S.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան>> հիմնադրամ
ք. Երևան, Տերյան 105
<<Արարատբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 1510001964940200
ՀԿՀՀ 01506385

Ռեկտոր՝

_____ Ս. Վարդանյան
(ստորագրություն)

L.S.

Հավելված
22.07.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/17 պայմանագրի
« 18 » դեկտեմբերի 2020թ. կնքված N 2 համաձայնագրի

<<Հավելված N2
22.07.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/17 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Հաշվեհամարը	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝										
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/115	900011034387	<<Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	5 175 000	5 175 000	5 175 000	5 175 000
2	71241200/114	900011034403	ՀՀ Արարատի մարզի <<Վեդիի ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	4 680 000	4 680 000	4 680 000	4 680 000
ԸՆԴԱՄԵՆԸ				-	-	-	-	-	-	-	-	-	9 855 000	9 855 000	9 855 000	9 855 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով։>>:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034387, 900011034403
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար
_____ Ա. Քրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան>> հիմնադրամ
ք. Երևան, Տերյան 105
<<Արարատբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 15100019840940200
ՀՎՀՀ 01506385

Ռեկտոր
_____ Ե. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.